էին նրա բարձր դիրքի համար: Հիւրանոցը կառուցած էր Մարու-Եամայի (լեռ Մարու) լանջին, որտեղից մի սքանչելի տեսարան է բացւում ամբողջ քաղաքի վրա, սկսելով կանաչի մէջ կորած մօտակայ տաճարներից մինչեւ հեռաւոր պագոդները:

Դէպի պատշգամբ տանող երկար սանդուխով անընդհատ բարձրանում էին անգլուհիները, բոլորն էլ սպիտակ հագած եւ բոլորը զւարթ կատակ անելով իրանց ջենտլմէնների հետ: Նախաճաշի ժամն էր, եւ ամենքը շտապում էին պատշգամբ, ուր սեղաններ էին բացւած եւ ուր մեղմ ճօճւում էր պանկերը, կարծես այցելուներին վեր կանչելով:

Տօթ օր էր:

Ուղեկիցներս գնացին քիչ հանգստանալու:

Իսկ ես հանգիստ մնալ չէի կարողանում: Ինչ որ խորհրդաւոր ու անորոշ ձայներ էին հասնում ինձ դրացի սրբավայրերից ու անդիմադրելի կերպով քաշում էին դէպի իրանք:

Իջայ փողոց:

Մուտքի դէմը կանգնած էին ջինրիկիշաները: Դրանք օրերով մնում են այդտեղ իրանց յատկացրած ծածկի տակ, ուշադիր հետեւում դուրս ելնողներին եւ անմիջապէս ձայն են տալիս ջինրիկիշային, որ եւրոպացուն առաջին անգամ բերել է:

Երեւալուս պէս մօտ վազեց իմ ջինրիկիշաս:

Նա զարմացաւ, երբ ես գլխով բացասական նշան արի եւ քայլերս ուղղեցի դէպի քաղաք: Այն ժամանակ իր կառքը քշեց ծածկի տակ եւ հետեւեց ինձ նախ բաւական հեռուից, յետոյ աւելի ու աւելի մօտենալով, մինչեւ որ վերջապէս սկսեց քայլել կողքիցս:

Մի առ ժամանակ գալիս էր հետս, առանց մի խօսք